ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 535-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ՄԱՅԼԵՌ» ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով և «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի N 1246-Ա որոշման 6-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում «Մայլեռ» լեռնային հանգստավայրի կառուցման ներդրումային ծրագրով նախատեսված՝ պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքը կառուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի «Մայլեռ» հանգստավայրի ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի «Մայլեռ» հանգստավայրի ասֆալտապատ ավտոճանապարհի ծրագիծը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ավտոճանապարհի կառուցման համար նախատեսված հատկացումները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության 2023-2024 թվականների պետական բյուջեներով պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման նպատակով հատկացվող միջոցների հաշվին՝ առանց տարեկան չափաքանակի ավելացման.

2) սույն որոշման 1-ին կետում նշված ավտոճանապարհը լինելու է 3 կիլոմետր երկարությամբ և 8 մետր լայնությամբ:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով նախատեսված ավտոճանապարհի կառուցման աշխատանքների իրականացումը:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոճանապարհի կառուցման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նախատեսված հատկացումները կատարվելու են երկու փուլով՝

1) առաջին փուլ՝ ավտոճանապարհի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի և դրանց փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար.

2) երկրորդ փուլ՝ շինարարական աշխատանքների իրականացման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ